## *ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

### *<< ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ*

*Սիսիան քաղաքի <<Հիդրոշինարարների այգի>> հասցեում գտնվող 0.19հա հողամասը տարիների ընթացքում բաժանվել է առանձին միավորների և հատկացվել հասարակական կառուցապատման նպատկով: Արդյունքում գլխավոր հատակագծում առկա զբոսայգի համարվող տարածքի 0.6709հա հողամասը փաստացի կառուցապատված է հասարակական շենք-շինություններով, և ըստ էության չի ծառայում և չեր կարող ծառայել որպես զբոսայգի: Կարևորելով քաղաքի կենտրոնական հատվածում քաղաքաշինական տեսքի ապահովումը և համայնքի հողօգտագործման կարգավորումը, նպատակահարմար է գտնվել արդեն իսկ այգու կառուցապատված հատվածը ընդհանուր օգտագործման հողերից տեղափոխելու հասարակական կառուցապատման հողերի շարքը:*

*Ելնելով վերոգրյալից՝ կազմվել է հողաշինարարական գործ, որն էլ ներկայացվել է << քաղաքաշինության կոմիտեի քնարկմանը, որից հետո կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ տրվել է դրական կարծիք:*

*Հիդրոշինարարների այգի թիվ 3/11-1 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվել է բնակավայրերի հասարակական կառուցապատման և վերագրանցվել է << կադաստրի կոմիտեի կողմից: Համաձայն Սիսիանի համայնքի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 753-Ա որոշմամբ հողամասի կառուցապատման պայմանագրի դադարել է, ուստի անհրաժեշտ է հողամասն ու վրան կառուցված շինությունը նվիրել շինությունն կառուցած անձ՝ Լյուդմիլա Հայկի Գրիգորյանին:*

*Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության*
*և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝*

*Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
*04.10.2019թ*

## *ՏԵՂԵԿԱՆՔ*

### *<< ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի, իսկ եկամտային մասում կկատարվի ավելացում:*

*Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության*
*և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝*

*Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
*04.10.2019թ*